Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի <<Կանաչուտի Գ. Եփրեմյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տեխնոլոգիա(4դասաժամ, տղաների խումբ) երաժշտության (8դասաժամ), մայրենի (13դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն(Ձև4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղերի, հավաստագրերի պատճենները(դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3×4չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների տեսքով:

Փաստաթղթերն ընդունվում է սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից-15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 16-ին՝ ժամը 14^{00}-ին, Արարատի մարզի Կանաչուտի Գ. Եփրեմյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել (094)-72-60-04 հեռախոսահամարով: